Հարցաթերթ
Աշխարհագրություն առարկայի օլիմպիադա
դպրոցական փուլ – 2023-2024 ուս. տարի
(տևողությունը – 90 րոպե)
10 – րդ դասարան

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

1. **Հայկական լեռնաշխարհի գետերից ո՞րի ավազանում է առավել շատ տեղումներ թափվում**
   1. Կուր 2. Արաքս 3. Ճորոխ 4. Տիգրիս
2. **Նշված վայրերից որու՞մ է միջին ջերմաստիճանների տարեկան լայնույթը ավելի մեծ**
   1. Իջևան 2. Հրազդան
   3. Արարատ 4. Վանաձոր
3. **ՀՀ հրաբխային լեռնավահանների և սարավանդների մարզում առավել տարածված հողատեսակն է՝**
   1. սևահող 2. գորշ կիսաանապատային
   3. շագանակագույն 4. մարգագետնատափաստանային
4. **Շելֆը տարածվում է ծովերի և օվկիանոսների՝**
   1. փողրակներում 2. լանջերին 3. աբիսալում 4. մինչև 200մ խորության գոտում
5. **Ի՞նչ են բնորոշում օստան և պրովինցիա եզրույթները**
   1. գյուղատնտեսական ակտիվ գոտի 2. արվարձան
   3. վարչատարածքային բաժանման միավոր 4. պետական կարգ
6. **Նշված տարածքներից որի՞ն է բնորոշ հետևյալ կլիմայական բնութագիրը՝ ամառները շոգ են ու չոր, ձմեռները՝ մեղմ ու խոնավ**
   1. Չինաստանի արևելք 2. Կրետե կղզի 3. Ֆլորիդա 4. Յուտլանդիա
7. **Պալեոզոյան դարաշրջանից վաղ ծագած ապարներին կարելի է կոչել՝**
   1. կայնոզոյան 2. հոլոցենյան 3. մինչքեմբրյան 4. ֆաներոզոյան
8. **Սալերի սահմաններից որու՞մ է բացակայում հրաբխականությունը**
   1. կոնստրուկտիվ 2. դեստրուկտիվ
   3. կոլիզիոն 4. տրանսֆորմացիոն/կոնսերվատիվ
9. **Անցումային ռասայի ներկայացուցիչները շատ են՝**
   1. Կոնգոյում 2. Մադագասկարում 3. Անգոլայում 4. Թունիսում
10. **Ա կետի կոորդինատներն են հս. լ. 5^0 և արլ. ե. 30^0: Ի՞նչ ազիմուտային անկյան տակ պետք է շարժվել այդ կետից, որպեսզի ամենակարճ ուղղով հասնել հյուսիսային բևեռ՝**
    1. 30^0 2. 45^0 3. 330^0 4. 360^0
11. **Մեգաքաղաքներին բնորոշ չէ՝**
    1. սեգրեգացիան 2. սուբուրբանիզացիան
    3. ջերմային կղզին 4. տնտեսության առաջնային հատվածի գերակշռությունը
12. **Ներդարավոր ռիթմիկ երևույթի օրինակ է՝**
    1. Կլիմայի սառեցումները 2. Ծալքավորությունները
    3. Երկրի առանցքի թեքության փոփոխությունները 4. Էլ-Նինյոն

13. **Տեղագրական քարտեզում պատկերված Ա գետի հովիտը ո՞ր տիպին է պատկանում**

1. V-աձև հովիտ 2. կանյոն 3. հարթավայրային 4. սառցադաշտային



14. **Աշխարհում տնտեսապես ակտիվ բնակչության մասնաբաժնով առաջատար երկիր է՝**

1. Չինաստան
2. Նիգերիա
3. Հնդկաստան
4. ԱՄՆ

15. **Ըստ Համաշխարհային բանկի տվյալների պատկերներից ո՞րն է համապատասխանում ՀՀ աշխատանքային ռեսուրսների դինամիկային 1990-2022թթ. ժամանակահատվածում**

1. Ա 2. Բ 3. Գ 4. Դ



Կարճ պատասխանով առաջադրանքներ

16. Ա կետի կոորդինատներն են հյուսիսային լայնության 88^0; արևելյան երկայնության 19^0, իսկ Բ կետի կոորդինատներն են հյուսիսային լայնության 87^0; արևելյան երկայնության 179^0: Որքա՞ն կկազմի երկու կետերի միջև ամենակարճ հեռավորությունը, եթե այն անցնում է բևեռով:

17. Ա երկրի ուղևորաշրջանառության ցուցանիշն է 3մլրդ ուղևոր-կմ է, իսկ փոխադրված ուղևորների քանակը՝ 150մլն մարդ: Որքա՞ն է կազմել փոխադրումների միջին հեռավորությունը:

18. Ա երկրում բնակչության թիվը 5մլն մարդ էր: Մեկ տարվա ընթացքում ներգաղթեց 60000 մարդ և արտագաղթեց 40000 մարդ: Հաշվել Ա երկրի միգրացիայի ինտենսիվության (շարժունակության) գործակիցը տոկոսով:

19. Հաշվել տվյալ տեղանքում մագնիսական ազիմուտի մեծությունը, եթե ուղղության անկյունը 112^0 է, իսկ մագնիսական խոտորումը աջակողմյան է՝ 5^0:

20. Որքա՞ն է արևի ճառագայթների անկման անկյունը Երևանում հունիսի 24-ին:

Առարկայական հանձնաժողովի նախագահ՝ **Վարդան Ասատրյան**